ԸՆԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Արման Ստեփանի Նալբանդյանի «Սյունիքի ուշ միջնադարյան նյութական մշակույթը (ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Սյունիքի տարածաշրջանը միշտ առանձնահատուկ ռազմավարական նշանակություն է ունեցել իր բազմադարյան պատմության ընթացքում: Ուշմիջնադարյան Սյունիքի մշակույթի քննությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերել վերջին ժամանակների քաղաքական զարգացումների համատեքստում, երբ Հայաստանի հանրապետության հարավ-արևելյան դարպասը համարվող մարզը դարձել է հարևան երկրների կողմից շահարկումների առարկա: Այդ առումով հատկապես արդիական, ինչ որ տեղ նույնիսկ ուշացած է Սյունիքի ուշ միջնադարյան մշակույթի քննությունը, երբ ժամանակակից Ադրբեջանի ոչ միայն քաղաքական, այլև գիտական շրջանակները ներկայացնում են այդ տարածքը որպես իրենց «պետության» պատմական մաս՝ չթաքցնելով իրենց հավակնությունները դրա նկատմամբ:

Թեմայի գիտական արժեքը նաև այն է, որ ուշ միջնադարյան մշակույթը հայ հնագիտության ամենաբաց կողմերից է: Այդպիսի արժեքավոր ուսումնասիրություն է Ա. Բաբաջանյանի ատենախոսությունը՝ նվիրված Հայաստանի 14-17-րդ դդ. խեցեղենին: Սակայն պակաս կարևոր չէ Հայաստանի առանձին վերցրած հատվածների ուշմիջնադարյան նյութական մշակույթի հետազոտությունը, ի վերջո, կարող է ընդարձակել ուսումնասիրության շրջանակները՝ տալով առավել բազմակողմանի և ամփոփ պատկեր պատմական այդ բարդ ժամանակաշրջանի մասին:

Աշխատանքի ներածության մեջ հեղինակը ներկայացնում է նպատակը, մեթոդաբանությունը, արդիականությունը, համառոտ բնութագրում է թեմային առնչվող հիմնախնդիրները: Ներկայացված է ուսումնասիրության պատմությունը,

անդրադարձ է արվել նաև աղբյուրների քննությանը, որից պարզ երևում է նրա քաջատեղյակությունը՝ այդ ոլորտում առկա հետազոտական դաշտին:

Աշխատանքի առաջին գլխում ատենախոսը համառոտ ներկայացնում է Սյունիքի պատմաաշխարհագրական բնութագիրը և փորձում պատմական համատեքստում բացատրել Սյունիքի ուշմիջնադարյան մշակույթի առանձնահատկությունները, որոշակի անկման պատճառները:

Երկրորդ գլխում Ա. Նալբանդյանը համակարգված ներկայացնում է ուշմիջնադարյան Սյունիքի հուշարձանների պեղումներ՝ բաժանելով չորս ենթագլուխների: Այստեղ հեղինակը մանրամասն վերլուծում է հատկապես վանական համալիրները, այն էական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ուշ միջնադարում վանական համալիրների, դրանց կից կառույցների ճարտարապետության մեջ, պայմանավորված նաև անապատների ի հայտ գալու հետ: Պեղումների արդյունքում նա բացահայտում է նաև այն հուշարձանները, որոնք կառուցվել են ուշ միջնադարում՝ նախկինում խոնարհված եկեղեցիների տեղում:

Իր անցկացրած պեղումների ընթացքում ատենախոսը հայտնաբերել է բոլորովին նոր, մինչ այդ անհայտ կոթողներ՝ խաչքարեր և տապանաքարեր, որոնց ուսումնասիրությունն ամփոփել է երրորդ գլխում: Այս գլուխը առանձնապես արժեքավոր է, քանի որ հեղինակը յուրաքանչյուր նորահայտ կոթողը, արձանագրությունը ուսումնասիրելիս դրանք ապրոբացրել է այդ ոլորտների լավագույն այնպիսի մասնագետների խորհրդատվությամբ, ինչպիսիք են Հ. Պետրոսյանը, Ա. Հարությունյանը:

Չորրորդ գլխում ատենախոսն առանձին խմբերով ներկայացնում է հայտնաբերված հնագիտական նյութը՝ խեցեղեն, մետաղյա առարկաներ, ոսկոր, քար: Չնայած նյութի սղությանը, այնուամենայնիվ Ա. Նալբանդյանին հաջողվել է մեթոդաբանորեն հստակ խմբավորել և անգամ ցույց տալ արհեստների էական անկումը՝ համեմատած զարգացած միջնադարի հետ: Այնուամենայնիվ, կարելի էր

ավելի ընդարձակ անդրադառնալ հատկապես ուշմիջնադարյան հախճապակուն, որոնք Հայաստանի հուշարձաններում հաճախ չեն հանդիպում:

Հստակ են ձևակերպված գիտական եզրակացությունները, որոնք լիովին համապատասխանում են գլուխներում բարձրացված հիմնախնդիրներին:

Աշխատանքի շահեկան կողմերից են երկրաբանական և հնաբուսաբանական հետազոտությունները, որոնք ներկայացված են աշխատանքի հավելվածում: Ա. Նալբանդյանը կարողացել է նաև ճիշտ համադրել արխիվային նյութերը հնագիտական պեղումներով ստացած տվյալների հետ, որի արդյունքում պատկերը ավելի ամբողջանում է:

Այնուամենայնիվ կցանկանայինք անել որոշ դիտարկումներ.

1. Կցանկանայի անդրադառնալ վերնագրի հավելումին՝ «ըստ վերջին տարիների պեղումների արդյունքների»: Իմ կարծիքով՝ կա՛մ պետք էր որոշակիացնել, թե վերջին տարիների տակ ինչ է հասկացվում, կա՛մ պարզապես չնշել ոչինչ, քանի որ հեղինակը հարցերը քննում է ավելի լայն դաշտում, քան իր պեղած նյութն է:
2. Ատենախոսության հեղինակը հաճախ ոչ նպատակային և մանրամասն անդրադարձ է կատարում թեմային անմիջականորեն չառնչվող տարածաշրջաններին և ժամանակաշրջաններին, որոնք ծանրացնում են մատուցվող նյութը և դժվարացնում ընկալումը: Օրինակ՝ նա հիշատակում է Օ. Խնկիկյանի պեղումները, որոնք վերաբերում են Ք.ա. 3-րդ-1-ին հազարամյակներին, որոնք մեծ հաշվով չեն առնչվում թեմային: Նման համեմատական քննությունը պետք է այնքան նրբորեն անցկացվի, որ ստվեր չգցի բուն թեմայի վրա: Հեղինակը խոսում է նաև ձձումների մասին, որոնք պեղումներով չեն հայտնաբերվել: Կարծում ենք, որ դրանց մասին կարելի էր ընդհանրապես չխոսել, մանավանդ որ ձձումը սովորական առարկա է՝ օգտագործված բոլոր ժամանակներում:

3. Հեղինակը մանրամասն քննում է վարպետների անուններով գտածոները, արձանագրությունները: Կարծում ենք, որ վարպետներին առնչվող հատվածները կարելի էր մեկտեղել առանջին ենթագլխում:
4. Հեղինակը նշում է. «Ճանկող արծիվը, որ ընդունված է համարել Մամիկոնյանների, Մամիկոնյան-Համազասպյանների (երկգլխանի), Խաղբակյան-Պռոշյանների զինանշան, Սյունիքում տարածվել է դեռևս 11-րդ դարից, երբ Դլեն Խաղբակյանը Սյունիքի Հաբանդ գավառում ուներ տիրույթներ»: Այս հատվածում նա հղում է Ռ. Մաթևոսյանին, որի գիրքը՝ նվիրված հայկական զինանշաններին, շատ վիճելի է: Այսօր «ճանկող արծվի» մոտիվի վերաբերյալ կան հետքարքիր ուսումնասիրություններ, որոնք այն մեկնաբանում են քրիստոնեաբանության տեսանկյունից:
5. Չնայած նրան, որ ատենախոսը շատ գրագետ է ներկայացնում հայերեն եզրույթները, այնուամենայնիվ, որոշ դեպքերում թարգմանությունը համոզիչ չէ: Այսպես, սպիտակ կավի տեսակը՝ կաոլինը, որը դեռևս զարգացած միջնադարում լայնորեն կիրառվել է հախճապակու և ճենապակու արդատրության մեջ և աչքի է ընկնում ամրությամբ, այնքան էլ ճիշտ չէ նույնացնել կավճաքարին:
6. Գրականությունը և հղումները, կարելի է ասել, գրեթե ամբողջությամբ կամ հայալեզու է, կամ հայ հեղինակներ են: Կարելի էր օգտագործել օտարալեզու գրականություն, որը ներկայացնում է ուշմիջնադարյան իրանական մշակույթը: Իհարկե, հեղինակը նշում է, որ հատկապես հախճապակին իրանական ծագում ունի, սակայն պեղած խեցեղենը կարել էր դիտարկել նաև առևտրական կապերի տեսանկյունից, երբ առկա են բարձրորակ նմուշներ՝ օգտագործելով համապատասխան գրականություն:
7. Ցանկալի կլիներ ավելի խորը քննել պեղված նյութը առևտրական ճանապարհների լույսի ներքո, քանի որ Սյունիքը Արևելքը Արևմուտքին կամրջող մի բացառիկ տարածք է: Դրա լավագույն ապացույցը քննության առարկա ժամանակաշրջանին վերաբերող դրամական գանձերն են, որոնց մի մասը հրատարակված է: Այդպիսի

մի բացառիկ գանձ է Մեղրիի 17-րդ դ. գանձը՝ բաղկացած ոչ միայն պարսկական դրամներից, այլև վենետիկյան դուկատներից: Այստեղից գտնվել են նաև արևմտաեվրոպական 16-17-րդ դդ. ծանր քաշի տալերներ: Այս ամենը լավագույն ապացույն է Սյունիքի նշանակության՝ լոգիստիկայի առումով:

8. Որոշ մտքեր, օրինակներ ատենախոսության տարբեր հատվածներում կրկնվում են: Աշխատանքը խմբագրումների կարիք ունի: Այդ տարածաշրջանի դեպքում հատկապես պետք է խուսափել թուրքական անվանումներից: Մի քանի տեղ հիշատակված Նյուվադին այսօր վերանվանվել է Նոնաձոր:

Այս դիտարկումները, այնուամենայնիվ, չեն նսեմացնում Ա. Նալբանդյանի գիտական աշխատանքը: Թեման ուսումնասիրված է բազմակողմանի, մեկտեղված են աղբյուրագիտական տվյալներ, հնագիտական պեղածո հարուտ նյութ: Աշխատանքը, հատկապես, արժեքավոր է դառնում հեղինակի կողմից՝ հնագիտական նյութի ենթատեքստում ճիշտ օգտագործված վիմագրական տվյալների, կոթողային արվեստի ոճաբանական վերլուծության շնորհիվ, որոնք լրացնում են միջնադարյան պատմական աղբյուրների բացը: Աշխատանքից երևում է, որ ատենախոսը փայլուն ծանոթ է տարածաշրջանին, այնտեղի հուշարձաններին, և տպավորություն է, որ Ա. Նալբանդյանը պեղել է Սյունիքի յուրաքանչյուր հուշարձանը:

Մասնակցությունը հնագիտական պեղումներին, շերտերի բացումը՝ անգամ ոչ մեծ թվով գտածոների պայմաններում, հնարավորություն է տալիս կարևոր բացահայտումներ անել, ինչը որ հիանալի ձևով հաջողվել է ատենախոսին՝ ով ոչ միայն անձամբ մասնակցել մի շարք հնավայրերի պեղումներին, այլև ղեկավարել արշավախումբը:

Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ Արման Նալբանդյանի ատենախոսությունը, գիտական մեթոդներով հիմնավորված, լրացնում է ուշմիջնադարյան Հայաստանի ուսումնասիրության մեջ առկա բացը՝ առանձին վերցրած պատմական տարածքի

նյութական մշակույթը: Ներկայացված սեղմագիրը լիովին արտահայտում է ատենախոսության բովանդակությանը:

Հաշվի առնելով ատենախոսության գիտական արժեքը՝ պետք է ասել, որ այն միանգամայն համապատասխանում է 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գործող պահանջներին և Արման Ստեփանի Նալբանդյանն արժանի է իր հայցած գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ 06.2025

Ընդդիմախոս՝ Արմինե Զոհրաբյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
Հնագիտության բաժնի գիտաշխատող

Հաստատում եմ՝ Ն. Երանյան
պատմ. գիտ. թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
գիտական գծով փոխտնօրեն